ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԲԵՐԴԻ ԲԿ» ՓԲԸ
MINISTERY OF HEALT OF THE REPUBLIC OF ARMENIA
«BERD MC» CJSC
МИНИСТЕРСТВО ЗДРАВООХРАНЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИА
«БЕРД МЦ» ЗАО

ՀՀ ք.Բերդ, Ալեք Մանուկյան 25 էլ.փոստ -berdmedikal@yandex.com, հեռ. /0267/2-14-02

16.04.2026թ.
Թիվ 119

«Բեսթ Թրեյդինգ 20» ՍՊԸ (ՀՎՀՀ՝ 08435286)
հասցե՝ Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի, Երևանյան 26
էլ. հասցե՝ btraiding@list.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագիրը միակողմանի լուծման մասին

«Բերդի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության (այսուհետև՝ Գնորդ) և «Բեսթ Թրեյդինգ 20» ՍՊ ընկերության (այսուհետև՝ Վաճառող) միջև 11.03.2026թ.-ին կնքված «ԲԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/20-1» ծածկագրով համակարգիչների մատակարարման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված և սույն ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությամբ՝ նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Սույն կետում նշված արձանագրությունը կազմում է պայմանագրի անբաժանելի մասը: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով:» :

Պայմանագրի 2.1.7 կետով սահմանված է, որ Գնորդն իրավուն ունի «Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը».

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,...»:

Պայմանագրի Հավելված 2 -ով Ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանված «2026թ-ի ընթացքում ՝ գնորդի կողմից պատվիրվելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում»:

Միաժամանակ սահմանված է, որ «* Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված

մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում:»

11.03.2026թ.-ին Գնորդի էլեկտրոնային փոստի հասցեից Վաճառողի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվել է ապրանքների մատակարարման համաձայնագիրը կնքելու ծանուցումը և կնքվելիք համաձայնագրի նախագիծը, սակայն մինչ այժմ վավերացված համաձայնագիրը չի ստացվել : 13.03.2026թ.-ին էլեկտրոնային փոստով ուղարկվել է նաև ապրանքներն ամբողջ ծավալով մատակակարելու պատվերը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի 526-Ն որոշման 33-րդ կետի 12-րդ ենթակետը, որով սահմանվում է, որ «... պայմանագրի կողմը համաձայնագիրը կնքում, իսկ ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները պատվիրատուին ներկայացնում է հրավերով սահմանված ժամկետում, որը չի կարող պակաս լինել համաձայնագիր կնքելու մասին ծանուցումն ստանալու օրվանից հաշված տասն աշխատանքային օրից: Հակառակ դեպքում պայմանագիրը պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է», ինչպես նաև Պայմանագրի 8.11 կետը՝ «Բերդի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունը 2026թ. ապրիլի 15-ին միակողմանի ամբողջությամբ լուծում է նշված պայմանագիրը:

Միևնույն ժամանակ հայտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ տեղեկացնում եմ, որ պայմանագրի կատարման և որակավորման ապահովման գումարները կազմում են համապատասխանաբար՝ 244080 (երկու հարյուր քառասունչորս հազար ութսուն) և 366120 (երեք հարյուր վաթսունվեց հազար մեկ հարյուր քսան) ՀՀ դրամ, որոնք անհրաժեշտ է վճարել «Բերդի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության «Արդշինբանկ» ՓԲԸ «Տավուշ» մասնաճյուղում բացված 2477800186580010 հաշվեհամարին:

Տեղեկացնում եմ, որ եթե մինչև 2026թ. ապրիլի 26-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի պայմանագրի կատարման և որակավորման ապահովման գումարները, ապա «Բերդի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունը «Բեսթ Թրեյդինգ 20» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնի լիազորված մարմին:

Հարգանքով՝
տնօրեն Ա. Մարդանյան